սեբիի բուն խորանը քառանկիւնի է, երկու սիւների վերայ հաստատուած. սիւների խարիսխները արմաւենիկից, բունները կապերտաղարդից, իսկ խոյակները մէջք մէջքի եւ գլուխները իրար դարձած թեւաւոր զոյգ առիւծներից բաղկացած, որոնց գլուխներից վեր տափակ տախտակների վերայով ձգուած է խորանի հիմք կազմող գերանը, մակերեւոյթը կապերտի տարբեր մոտիւով նկարազարդուած: Լիւնետի մէջ «Եւսիբի»-ի անդրին, իսկ Լիւնետի գլխի կամարի մակերեւոյթը ոլորապտոյտ արմաւենիկի եւ եռատերեւ զարդերով, մէջները երկերկու թռչուններ երկու կողմից: Ճակատին երկգլխանի թեւատարած արծիւ: Վերեւի անկիւններում մի մի պարիկ սիրամարգի պոչերով: Իսկ ամենից բարձր, ճակատի կեդրոնում պատուանդանով խաչ, որին փարուած են երկու սիրամարգներ: Կողքերի պայմանական ծառերի վերայ մի մի ոճաւորած եւ գեղեցիկ թռչուն:

Կարպիանոսի խորանը փոքրիկ տարբերութիւններով նման սորան. միայն լիւնետի գլխի (պատկեր 1.) կամարի ճակատին մի անօթ է կամ աւելի ճիշդ կանթաւոր փարչ, որից ջուր են կամենում խմել երկու կողմից մի մի թռչուն: Իսկ վերեւի ճակատի կեդրոնում կանթաւոր եւ լայնաբերան մի անօթ, մէջը ծաղիկներ. երկու կողմից մի մի սիրամարգ. աջից (նայողի) սիրամարգը պոչը փռել է հորիզոնական ուղղութեամբ եւ ջուր է խմում անօթից, իսկ ձախ կողմի սիրամարգը պոչը փռել է դէպի վեր եւ դարձել է դիտելու նորա գեղեցկութիւնը:



Պատկ. 16.— Ջեռ. Մաշտոց Երուս. No. 2027, 8բ., 1256 Թուի

Այս նկարագրութեան համեմատ են եւ Բարձր բերդի Աւետարանի համապատասխան խորանները, ըստ նկարագրութեան Տ. Արտաւազդ արքեպիսկոպոսի,* որի գրիչն ու

*Մայր Ցուցակ Բ. եր. 3: